ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 991-Ա

07 հուլիսի 2026թ.

ք.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՈՐՎԵԳԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ. Կոստանյան փողոցի թիվ 3 շենքի թիվ 43 բնակարանի բնակիչ Սեդա Հովակիմի Ավագյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 06052025-04-0072 տրված՝ 06.05.2025թ., «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 15.06.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04022DQZNQLX, 04022W9KF5HA/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի Նորվեգական փողոցի թիվ 8 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, Նորվեգական փողոց, թիվ 8/1 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, Նորվեգական փողոց, թիվ 8 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 992-Ա

07 հուլիսի 2026թ. ք.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ /ՆԱԽԿԻՆ ԿԻՐՈՎ/ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 37 ՇԵՆՔԻ ԹԻՎ 24 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 37 շենքի թիվ 25 բնակարանի բնակիչ Հռիփսիկ Սաշայի Ավետիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 37 շենքի թիվ 24 հասցեով անշարժ գույքին /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 10.04.2026թ. հաստատված 3003 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 10.04.2026թ. հաստատված 3004 սեղանամատյանով գրանցված սեփականության իրավունքի վկայագիր, և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011TTPVWCG/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Վազգեն Առաջինի փողոց, թիվ 37 շենք, թիվ 43խանութ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 993-Ա

07 հուլիսի 2026թ. ք.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԻ 04-081-0026-0012 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Խաղաղության փողոցի թիվ 8 տան բնակիչ Երանիկ Սերյոժայի Սաֆարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի 04-081-0026-0012 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին / հիմք՝ թիվ 068467 տրված՝ 16.05.2000թ. սեփականության իրավունքի վկայական, «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 19.06.2026թ. կնքված թիվ 3206 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04022QNYLJUQ/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, գյուղ Ոսկեհատ, Խաղաղության փողոց, թիվ 8 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 994-Ա

07 հուլիսի 2026թ. ք.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոց փողոցի թիվ 63 շենքի թիվ 24 բնակարանի բնակիչ Անահիտ Ջանիբեկի Դանիելյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 2170395 տրված՝ 25.12.2006թ., և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04022JXNSVXB/տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատի բնակավայր, 1-ին փողոց, թիվ 37 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 995Ա

08 հուլիսի 2026թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ «ԶՎԱՐԹՆՈՑ» ԳԿՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 17.06.2026թ. թիվ Կ-17062026-04-0098 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի «Զվարթնոց» ԳԿՏ տարածքում գտնվող «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 10.02.2026թ. կազմված հողամասի հատակագծում ընդգրկված 0.09հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության ցածրարժեք այլ հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք՝ 4-րդ կարգի վարելահողի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 996Ա

08 հուլիսի 2026թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 18.04.2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 620Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 21.05.2026թ. թիվ Կ-21052026-04-0140 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի ղեկավարի 18.04.2026թ. «Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Միքայել Նալբանդյան փողոցի թիվ 5գ հասցեում գտնվող արտադրամասի նպատակային ու գործառնական նշանակությունը և հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 620Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

որոշման հիմնական մասում նշված « թիվ 88 որոշման պահանջներով » բառերից հետո լրացնել «և հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր 8 և Արմավիր 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի և Ոսկեհատ գյուղի գլխավոր հատակագծերի նախագծերը /գոտևորման նախագծերը/ հաստատելու մասին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 26.04.2022թ. առաջին նստաշրջանի արտահերթ առաջին նիստի թիվ 80 որոշման, Արմավիրի մարզպետի 19.05.2022թ. թիվ ՄՈ/344-2022 որոշման պահանջները » բառերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 997Ա

08 հուլիսի 2026թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ 11.05.2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 685Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 25.05.2026թ. թիվ Կ-25052026-04-0133 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող, առաջին տեղակալի 14.05.2026 թվականի «Ինքնակամ կառուցված բնակելի տունը և օժանդակ շինությունները օրինականացնելու մասին» թիվ 685Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման հիմնական մասում և 1-ին կետում նշված « 653.1քմ /արտաքին 653.1քմ, ներքին 554.3քմ/ » բառերը փոփոխել « 612.7քմ / արտաքին 612.7քմ, ներքին 520.6քմ /» բառերով:

2)որոշման վերնագրում, հիմնական և եզրափակիչ մասերում նշված « բնակելի տունը և օժանդակ շինությունները » բառերը փոփոխել « բնակելի տունը և պարիսպը» բառերով:

3)որոշման 3-րդ կետում նշված «23.8քմ մակերեսով շինությունները» բառերը փոփոխել «33.7քմ ներքին մակերեսով շինությունները» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 998-Ա

08 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 3-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 30.10.2025թ. թիվ 27-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով 08.07.2026թ.-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի

համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն սույն որոշման թիվ 1, թիվ 2, թիվ 3 և թիվ 4 հավելվածների:

2. Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

2025-07-08 18:21:08 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 999-Ա

«08»հուլիսի 2026թ. ք. Էջմիածին

ՌՈՒԲԵՆ ՄԱՆՈՒԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ «ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԵԴԱԼ» ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 08.10.2024 թվականի թիվ 73-Լ որոշումը, Ռուբեն Մանուկի Մանուկյանի կողմից Վաղարշապատ համայնքի զարգացման գործում մեծ ներդրման, համայնքի բնակիչների բարեկեցությանը միտված գործունեության և Վաղարշապատ համայնքին բացառիկ բարօրությանն ուղղված՝ ի շահ Վաղարշապատ համայնքի և համայնքի բնակիչների իրականացրած բարեգործական գործունեության համար.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ռուբեն Մանուկի Մանուկյանին շնորհել «Համայնքի ղեկավարի մեդալ»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
08 հուլիսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1000 -Ն

09 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով 23.12.2025թ. ավագանու թիվ 19-Ն որոշման 2-րդ կետը և ելնելով անհրաժեշտությունից.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նվազեցնել՝
1) Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարման /բաժին 01, խումբ 1, դաս 1/ «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածը /հոդ. 5113/ 165000.0 հազ. դրամ:
2) Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (այլ դասերին չպատկանող) /բաժին 01, խումբ 6, դաս 1/ «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածը /հոդ. 4251/ 16500.0 հազ. դրամ:
3) Ճանապարհային տրանսպորտի /բաժին 04, խումբ 5, դաս 1/ «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածը /հոդ. 4239/ 8000.0 հազ. դրամ, «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածը /հոդ. 4251/ 40000.0 հազ. դրամ և «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածը /հոդ. 5113/ 100000.0 հազ. դրամ:
4) Աղբահանման /բաժին 05, խումբ 1, դաս 1/ «Տրանսպորտային սարքավորումներ» հոդվածը /հոդ. 5121/ 8000.0 հազ. դրամ:
5) Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների /բաժին 08, խումբ 2, դաս 3/ «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» հոդվածը /հոդ. 4511/ 113468.5 հազ. դրամ:

2. Ավելացնել՝
1) Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարման /բաժին 01, խումբ 1, դաս 1/ «Ներկայացուցչական ծախսեր» հոդվածը /հոդ. 4237/ 3000.0 հազ. դրամ, «Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին» հոդվածը /հոդ. 4621/ 1000.0 հազ. դրամ, «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածը /հոդ. 4639/ 1500.0 հազ. դրամ, «Վարչական սարքավորումներ» հոդվածը /հոդ. 5122/ 15000.0 հազ. դրամ և «Նախագծահետազոտական ծախսեր» հոդվածը /հոդ. 5134/ 49500.0 հազ. դրամ:

2) Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (այլ դասերին չպատկանող) /բաժին 01, խումբ 6, դաս 1/ «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածը /հոդ. 4637/ 3000.0 հազ. դրամ:
3) Ոռոգման /բաժին 04, խումբ 2, դաս 4/ «Նախագծահետազոտական ծախսեր» հոդվածը /հոդ. 5134/ 500.0 հազ. դրամ:
4) Նավթամթերքի և բնական գազի /բաժին 04, խումբ 3, դաս 2/ «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածը /հոդ. 5113/ 14000.0 հազ. դրամ և «Նախագծահետազոտական ծախսեր» հոդվածը /հոդ. 5134/ 1000.0 հազ. դրամ:
5) Աղբահանման /բաժին 05, խումբ 1, դաս 1/ «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածը /հոդ. 4111/ 35000.0 հազ. դրամ, «Գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածը /հոդ. 4261/ 1500.0 հազ. դրամ և «Վարչական սարքավորումներ» հոդվածը /հոդ. 5122/ 18000.0 հազ. դրամ:
6) Կեղտաջրերի հեռացման /բաժին 05, խումբ 2, դաս 1/ «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածը /հոդ. 5113/ 150000.0 հազ. դրամ և «Նախագծահետազոտական ծախսեր» հոդվածը /հոդ. 5134/ 5000.0 հազ. դրամ:
7) Համայնքային զարգացման /բաժին 06, խումբ 2, դաս 1/ «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածը /հոդ. 4111/ 23000.0 հազ. դրամ, «Ապահովագրական ծախսեր» հոդվածը /հոդ. 4215/ 500.0 հազ. դրամ և «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածը /հոդ. 4251/ 2000.0 հազ. դրամ:
8) Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների (այլ դասերին չպատկանող) /բաժին 06, խումբ 6, դաս 1/ «Գույքի և սարքավորումների վարձակալություն» հոդվածը /հոդ. 4216/ 27000.0 հազ. դրամ, «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածը /հոդ. 4251/ 41000.0 հազ. դրամ, «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածը /հոդ. 5113/ 12000.0 հազ. դրամ և «Վարչական սարքավորումներ» հոդվածը /հոդ. 5122/ 8000.0 հազ. դրամ:
9) Հանգստի և սպորտի ծառայությունների /բաժին 08, խումբ 1, դաս 1/ «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» հոդվածը /հոդ. 4511/ 26000.0 հազ. դրամ:
10) Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների /բաժին 08, խումբ 2, դաս 3/ «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» հոդվածը /հոդ. 4511/ 13468.5 հազ. դրամ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1001-Ա

09 հուլիսի 2026 թ.Ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 62 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Անդրանիկ թաղամասի թիվ 62 տան տան բնակիչ Ռազմիկ Օնիկի Գրիգորյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Անդրանիկ թաղամասի թիվ 62 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության վկայագիր՝ տրված՝ 21.03.1996թ, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 21.11.2023թ. տրված՝ թիվ Ամ-2123 արխիվային քաղվածք և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011PF6BJJT/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ք.Էջմիածին, Զորավար Անդրանիկի 3-րդ թաղամաս , թիվ 62 բնակելի տուն:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1002-Ա

09 հուլիսի 2026 թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՇԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 52 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Այգեշատ /Էջմիածնի շրջ./ բնակավայրի Մայիսյան փողոցի թիվ 27 տան բնակիչ Արթուր Ռոբերտի Հովսեփյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 06102023-04-0089 տրված՝ 06.10.2023թ., «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 22.05.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 040422PS9MYL, 04042KCHQA8J/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Այգեշատ /Էջմիածնի շրջ./ բնակավայրի Մայիսյան փողոցի թիվ 52 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.
Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Այգեշատ /Էջմիածնի շրջ./ բնակավայր, Մայիսյան փողոց, թիվ 52 հողամաս,
Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Այգեշատ /Էջմիածնի շրջ./ բնակավայր, Մայիսյան փողոց թիվ 52/1 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1003-Ա

09. հուլիս 2026թ.

ք.Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՌԱԶՄԻԿ ՕՆԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ՆԱԶԻԿ ԼԻՊԱՐԻՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ԱՐՄԵՆ ՌԱԶՄԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ՍԱԹԵՆԻԿ ՌԱԶՄԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի թաղամասի թիվ 62 տան բնակիչ Ռազմիկ Օնիկի Գրիգորյանի դիմումը՝ պարզվել է, որ.

- համաձայն 30.03.1996թ. սեփականության վկայագրի, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 21.11.2023թ. տրված՝ թիվ Ամ-2123 արխիվային քաղվածքի, «Աիդա Բաղրամյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0393/ կողմից 16.06.2026թ. կազմված հատակագծի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011PF6BJJT/՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 3-րդ թաղամասի թիվ 62 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Ռազմիկ Օնիկի Գրիգորյանին, Նազիկ Լիպարիտի Գրիգորյանին, Արմեն Ռազմիկի Գրիգորյանին և Սաթենիկ Ռազմիկի Գրիգորյանին.

-բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական 0,048 հա հողամասին կից ավել օգտագործվում է 0.001 հա սահմանազատված հողամաս,

-բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 3-րդ թաղամասի թիվ 62 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0.001 հա մակերեսով հողամասը համարել Ռազմիկ Օնիկի Գրիգորյանի, Նազիկ Լիպարիտի Գրիգորյանի, Արմեն Ռազմիկի Գրիգորյանի և Սաթենիկ Ռազմիկի Գրիգորյանի /ծնված՝ 15.04.1959թ., 02.09.1962թ., 23.04.1982թ., 03.04.1984թ./ սեփականությունը
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1004-Ա

09 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան փողոցի թիվ 276 տան բնակիչ Վենետիկ Սերոբի Մուրադյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի 04-002-0921-0005 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 22.08.2025թ. տրված՝ թիվ Ամ-1274 արխիվային քաղվածք, «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 15.10.2025թ. Հաստատված 6657 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011ZGTMDS3/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք.Էջմիածին, Ա.Մանուկյան 1-ին թաղամաս, թիվ 276 բնակելի տուն:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1005Ա

09 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ԳԵՎՈՐԳ ԳԱԳԻԿԻ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 2-րդ մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, 36-րդ հոդվածով, 37-րդ հոդվածով և 38-րդ հոդվածով, և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայր, Երիտասարդական փողոց թիվ 7 տան հասցեի բնակիչ՝ Արևիկ Սամվելի Բալեյանի 11.06.2026թ. դիմումը, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 06.04.2026թ. թիվ ԱՐԴ/0342/02/24 օրինական ուժ ստացած վճիռը, Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 16.06.2026թ. թիվ 8 նիստի թիվ 4 արձանագրությունը, ուսումնասիրություններն ու փաստերը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայր, Երիտասարդական փողոց 7 տան հասցեի բնակիչ՝ Գևորգ Գագիկի Տեր-Խաչատրյանի /ծնված՝ 14.10.2003թ., ծննդյան վկայական՝ ԱԱ 414560/, նկատմամբ սահմանել խնամակալություն՝ խնամակալ նշանակելով՝ Արևիկ Սամվելի Բալեյանին /ծնված՝ 05.03.1982թ., նույն.քարտ՝ 013004551/:

2. Հսկողություն սահմանել Գևորգ Գագիկի Տեր-Խաչատրյանի նկատմամբ խնամակալ նշանակված՝ Արևիկ Սամվելի Բալեյանի գործունեության նկատմամբ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Արևիկ Սամվելի Բալեյանին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1006Ա

09 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՆՎԱՐԴ ՄԱՐԿՈՍԻ ԲԱԲԱԽԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 2-րդ մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, 36-րդ հոդվածով, 37-րդ հոդվածով և 38-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Արշալույս բնակավայրի թիվ 27 փողոց թիվ 5 տան հասցեի Հրաչիկ Ռուբիկի Ղազարյանի 27.03.2026թ. դիմումը, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 20.03.2026թ. թիվ ԱՐԴ/0897/02/25 օրինական ուժ ստացած վճիռը, Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 16.06.2026թ. թիվ 8 նիստի թիվ 2 արձանագրությունը, ուսումնասիրություններն ու փաստերը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Արշալույս բնակավայրի թիվ 27 փողոցի թիվ 5 տան հասցեի բնակիչ՝ Նվարդ Մարկոսի Բաբախանյանի /ծնված՝ 05.05.1963թ., անձնագիր՝ AL 0355164/, նկատմամբ սահմանել խնամակալություն՝ խնամակալ նշանակելով՝ Հրաչիկ Ռուբիկի Ղազարյանին /ծնված՝ 22.05.1985թ., անձնագիր՝ AR 0583097/:
2. Հսկողություն սահմանել Նվարդ Մարկոսի Բաբախանյանի նկատմամբ խնամակալ նշանակված՝ Հրաչիկ Ռուբիկի Ղազարյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Հրաչիկ Ռուբիկի Ղազարյանին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԼՔԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1007Ա

09 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՌՈՄԱՆ ՄՐԱԶԻ ԱԼՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 2-րդ մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, 36-րդ հոդվածով, 37-րդ հոդվածով և 38-րդ հոդվածով, և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ծաղկալանջ բնակավայր, փողոց 7, թիվ 8 տան հասցեի բնակիչ՝ Զինա Լյուդվիգի Ալոյանի 11.05.2026թ. դիմումը, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 27.03.2026թ. թիվ ԱՐԴ/1770/02/25 օրինական ուժ ստացած վճիռը, Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 16.06.2026թ. թիվ 8 նիստի թիվ 3 արձանագրությունը, ուսումնասիրություններն ու փաստերը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ծաղկալանջ բնակավայր, փողոց 7, թիվ 8 տան հասցեի բնակիչ՝ Ռոման Մրազի Ալոյանի /ծնված՝ 25.09.1998թ., ծննդյան վկայական՝ ԱԱ 203019/, նկատմամբ սահմանել խնամակալություն՝ խնամակալ նշանակելով՝ Զինա Լյուդվիգի Ալոյանին /ծնված՝ 20.10.1973թ., անձնագիր՝ AT 0642457/:
2. Հսկողություն սահմանել Ռոման Մրազի Ալոյանի նկատմամբ խնամակալ նշանակված՝ Զինա Լյուդվիգի Ալոյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Զինա Լյուդվիգի Ալոյանին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1008Ա

09 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

«ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 33-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 15-Ն որոշումները և «ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը (մուտք՝ 2026 թվականի հուլիսի 08-ի N 10289).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2026 թվականի հուլիս ամսվա ընթացքում Վաղարշապատ համայնքի Երևան-Արմավիր-Թուրքիայի հանրապետություն Մ5, 16.050 կմ (Մանուշյան փողոց) հասցեում այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն (Թույլտվություն N 186 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1009Ա

09 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

«ԻՄԻՋ Մ. Գ.» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 33-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 15-Ն որոշումները և «ԻՄԻՋ.Մ..Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը (մուտք՝ 2026 թվականի հուլիսի 08-ի N 10281).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ԻՄԻՋ Մ..Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2026 թվականի հուլիս ամսվա ընթացքում Վաղարշապատ համայնքի Երևան-Արմավիր-Թուրքիայի հանրապետություն Մ5, 15.850 կմ և Մ5, 15.150 կմ (Մանուշյան փողոց) հասցեում այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն (Թույլտվություն N 187 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1010Ա

09 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ԳՈՒՅՔԸ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 2-րդ մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 38-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին թիվ 12 շենքի թիվ 38 բն. հասցեի բնակիչ Ժաննա Իմրանի Գասպարյանի 02.06.2026թ. դիմումը և Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 16.06.2026թ. թիվ 8 նիստի թիվ 5 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլտվություն տալ Ժաննա Իմրանի Գասպարյանին /ծնված՝ 22.01.1987թ., անձնագիր՝ A00255453/ տնօրինելու սեփականության իրավունքով իր անչափահաս երեխա՝ Էլենա Արթուրի Գասպարյանին /ծնված՝ 01.11.2009թ., ծննդյան վկայական՝ ԱԲ208260/ պատկանող Վաղարշապատ համայնքի Արշալույս բնակավայրի 32-րդ փողոցի թիվ 13 հողամաս հասցեում գտնվող գույքը /սեփականության վկայականի ծածկագիրը՝ 13022026-04-0072/:
2. Հսկողություն սահմանել Էլենա Արթուրի Գասպարյանի ծնող Ժաննա Իմրանի Գասպարյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ